ՓՈՒՆՋ

Թիւ 667 ՇԱԲԱԹ 1871 ԱՊՐԻԼ 24

ՊԱՂԱՊԱԿԱՆ

Շաբաթ մ՚ալ անցաւ, բայց դժբաղդ Գաղղիա տակաւին վերը ի վայր վիճակի մէջ կգտնուի։ Հեռագրական լուրերը՝ մերթ ինպատա Վէրսայլի կառավարութեան և մերթ ինպատա Փարիզի ապըստամբութեան զօրաց, տեղեկութիւններ կտուին աշխարհ։ բայց ամէն հաւանականութիւն կայ թէ՝ փարիզական խմբին քիչ օրէն պիտի ամքի, և քիչ օրէն Գաղղիա միայն մէկ իշխանութիւն մնալով՝ պիտի սկսի իւր ներքին ու արտաքին ծանր վէրքերը բուժել։

* * *

Սակայն, այս չարթուն՝ ուրիշ երևելի մայրաքաղաքի մը մէջ տեղի ունեցած անակնկալ անցքեր քաղաքագիտաց ուշը դրաւած են։

Փարիզի ապստամբաց գաղափարակից անգղիացիք Լոնտոնի մէջ հրապարակային ցոյցեր ըրեր են, և համակրութիւն ու յարգանք յայտներ են փարիզացւոց համար։ և մինչև իսկ յատկապէս երեսփոխաններ գրկեր են Փարիզ ի շնորհաւորութիւն ապստամբական վարչութեան։ Ոչիմիտ անգղիացիք առայժմ անտարբեր կկենան և կառավարութիւնը իբրև անկարևոր ինչ կնկատէ։

Լոնտոնի մէջ պատահած ուրիշ դէպք մ՚ալ կպատմուի։ Ժողովրդեան մէջ լսուելով թէ՝ կառավարութեան կողմանէ ազգային խորհրդարանին պիտի առաջարկուի ծծմբաւի վրայ տուրք մը դնել՝ մեծ խռովութիւն ծագեր է։ Բազմաթիւ գործաւորք և ծծմբաւի վաճառականիներ խնդրագիր մատուցեր են խորհրդարանին որ այսպիսի որոշում մը չարուի։ Ասկէց զատ, 10 հազարէն աւելի մարդիկ ժողվուելով մեծ ցոյցեր ըրեր են խորհրդարանին առջև, և նախատեր ու թշնամաներ են պաշտօնեաներին մէկքանին։ Բազմաթիւ ազգայք գլխարկնուն վրայ «ծծմբաւի տուրք չեմք ընդունիր» խօսքը նշանակած են, և ամենք ալ դրօշակներ վերուցած են եղեր, նոր գրքուելիք տուրքին ընտակարութիւնը յայտնելու նպատակաւ։ Կառավարութեան զօրաց կողմանէ մէկքանի տեղ ատանց թափորին ընդդիմութիւն եղեր է, բայց երկու կողմանէ չյամառելնուն համար, կռիւ և ուրիշ ձախող դէպքեր չեն պատահեր։

Ոչ միայն այս ցոյցերուն, այլ և երեսփոխանաց դիմադրութեանց վրայ, չյուսացուիր որ առաջարկեալ տուրքը հաստատուի և չարագոյն հետևանաց տեղի տրուի։

* * *

Ռուսիոյ վրայ ժամանակէ մ՚ի վեր եղած բոլոր տարաձայնութիւնները իբրև անատոյգ կհրատարակուին, եթէ՝ արդարև նա զինուորական պատրաստութիւնները ձգելով, զօրքը խաղաղութեան ժամանակի վիճակի մէջ դրեր է, ինչպէս կըսէ հեռագիր մը։

ԱԶԳԱՑԻՆ

Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ 22 րդ նիստն էր, որ տեղի ունեցաւ երէկ՝ ապրիլ 23՝ ի ներկայութեան մեծագոյն մասին, ընդ նախագահութեամբ ամենապատիւ սրբազան Պատրիարք Հօր։ և՝ ի բացակայութեան Ա. Բ. և Գ. ատենապետաց։ և՝ Ա. ատենադպիր Ռուսինեան էֆէնտի։ և հետևաբար՝ առժամանակեայ ատենապետութեամբ Ղազարոսեան մեծապատիւ Քրիստոստուր էֆէնտիի։

Ատեանը բացուեցաւ և դոցուեցաւ, նախորդ 21 դ նստին ատենագրութեան ընդունելութեան կամ վաւերացման խնդրով։

Մեծարգոյ ընթերցողք չպիտի զարմանան, երբ լսեն թէ՝ այս նստին մէջ ուրիշ խնդրոյ վրայ խօսելու ժամանակ չմնալուն պատճա՛ռը, բանաւոր է։

Նախորդ նստին ատենագրութեան վրայ փոխանակ «բացումն 1870 ամի և նիստ 21դ» նշանակուելու, «բացումն 1871ի և նիստ 1դ» նշանակուեր է։ Ասկէց զատ, Երեսփոխան էֆէնտիներուն և՛ չ մէկուն կողմանէ չբուռած խօսքեր ատելցեր են, և՝ միանգամայն այնպիսի խօսք մը գըրուեր է, որ բոլոր երեսփոխանաց համար անարդանք ու նախատինք է։

ՉԱՄԱՉՈՂ. ըսուեր է բոլոր երեսփոխանաց համար, և ըսողը Ռուսինեան էֆէնտին է։ Հետևաբար՝ մասնաւոր գիտողութիւններն արուելէն յետոյ, այս ամէն յանդգնութեանց ու նախատանաց վրայ խօսք բացուեցաւ, սասակ բաղքներ եղան, շատ երկար ու ջերմ բանակցութիւն ու վէճ եղաւ՝ նախանձախնդիր ըլլալով Ժողովին ու հետևաբար ազգին պատուոյն, և ուր ուրեմն որոշուեցաւ որ՝

Ա. Նախորդ նստին ատենագրութեան վրայ «բացումն 1870ի և 21դ նիստ» նշանակուի։

Բ. Ժողովին դէմ եղած նախատական խօսքերը իբրև հերքեալ նշանակուին, և դիւանին կողմանէ այսուհետև նշանախեց մ՚անգամ չաւելնայ ատենագրութեանց մէջ։

(Այս որոշումները տրուելու մօտ էր, երբ Գ. Ատենապետ Գարակէօզեան էֆէնտին հասաւ և իւր պաշտօնը վարեց)։

Իվերջոյ, ըստ սրսմ ատեանը գոյութիւնու որոշեալ ժամանակն հասած էր, առաջիկայ նստին խնդրոյ կարգը նշանակուեցաւ՝ հետևեալ կերպիւ։

1.—Ընդունելութիւն 22րդ ատենագրութեան

2.—Համարատուութիւն վարչութեան

3.—Վիճակաւ հրաժեշտ հինգերորդ մասին երեսփոխանաց

4.—Ատենական կամ ներքին կանոնագրութիւն

5.—Վերաքննութիւն Սահմանագրութեան

Ինչպէս յայտնի է՝ ժողովին յուզման և ժամանակաւորութեան պատճառն, Ռուսինեան էֆէնտին եղած է, և հետևապէս ուրիշ պատասխանատուութեանց հետ ա՛յս ալ անոր և միայն անո՛ր վրայ կը ծանրանայ։ Կցաւիմք, որ Ռուսինեան էֆէնտիի պէս հանճարաւոր՝ օրէնսդէտ ու ծանօթ մէկը այսպիսի պակասութեանց մէջ կգտուի, որ արդարև անարդարանալի և անթաղելի են։

Գափու-քեահեասը Սագայեան մեծապատիւ Ալեկսան էֆէնտին երեքշաբթի օրը հրաժարական մատոյց ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր և Բաղաքական ժողովոյ, բայց Նորին սրբազնութիւնն ու ժողովը չընդունելով՝ թախանձեցին որ վարէ իւր պաշտօնը։

Մէկ կողմանէ կդանդատիմք թէ՝ ազգային պաշտամանց համար արժանաւոր և բանիբուն անձինք շատ քիչ են, և արդարև այնպէս է։ բայց՝ միւս կողմանէ կվիրաւորեմք այնպիսի անձինքն՝ որ ազգային պաշտօն կվարեն ամենայն արժանիօք, և իրենց հաղուագիւտ յատկութիւններովն օգտակար կըլլան Ազգին, ինչպէս է Սագայեան Ալեկսան էֆէնտին։

Պարտաւորեմք շնորհակալութիւն մատուցանել ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր և ազգային Վարչութեան, որ լաւ կշռած ըլլալով Սագայեան էֆէնտիին արժանիքն՝ չեն ընդուներ հրաժեշտը յօդուտ և ի շահ Ազգիս։

Գափու-քեահեասի էֆէնտիի օդնական Ֆրէնկեան Աբրահամ էֆէնտին այսօր Պատրիարքարանի կողմանէ թէքիրատաղ կուգլուրի։ Պաշտօնն է՝ քննել հատարակութեան կողմանէ եղած բողոք մը ընդդէմ քանի մ՚անձանց, որք՝ իբր թէ արքունի ատոց բաշխման գործին մէջ անիրաւաբար կվարուին կամ հաւաքուած ստակն հաւատարմաբար տեղը չեն տար եղեր։ Կըսուի թէ՝ այս քա-

նի մը անձանց պարագլուխներն են Առաջնորդին մերձակայ ազգականները։

Թէքիրտաղի մէջ դարձեալ տեղի ունեցած այս խնդրոյն վրայ՝ թէև ուրիշ դիտողութիւններ կրնամք ընել, բայց՝ առ այժմ պահելով, կսպասեմք պաշտօնական քննութեան արդեանց։

ՎԵՑ ՆՈՐԸՆԹԱՑ ՔԱՀԱՆԱՅՔ Ի ՄԱՐԱՇ

Անցեալ հինգշաբթի և շաբաթ օրերը Հալէպի գերապատիւ Առաջնորդին կողմանէ երկու հեռագրեր եկան Պատրիարքարան։

Առաջին հեռագրէն կիմացուի թէ՝ Նիկողոս եպիսկոպոսէն նո՛ր ձեռնադրեալ վեց քահանայք Մարաշի ազգային եկեղեցին մնած և եկեղեցական պաշտօն վարելու եղած ըլլալով, ժողովրդեան մէջ մեծ խռովութիւն պատահեր է, այնպէս որ Միւթէսարրիֆը պարտաւորեր է անձամբ եկեղեցին դալ հանդարտեցուցեր տասն հոգի բանտարկել, և եղելութիւնը հեռագրով Հալէպ ընդհանուր կառավարչին ծանուցանել։ Նոյին վնասութիւնն ալ գերապատիւ Առաջնորդին հաղորդելով՝ անոր օրինաւոր խնդրանաց համաձայն դարձեալ հեռագրով հրաման ղրկեր է Մարաշի Միւթէսարրիֆին որ նոյն վեց քահանաները Հալէպ ղրկէ Առաջնորդին յանձնուելու համար։ Սակայն, Միւթէսարրիֆն ընդհանուր կառավարչին այս հրամանը չէ կատարեր։— տեղւոյն ժողովին մէջ թէև մեր ազգայնոց կողմանէ մինչև յարդ անդամ չկայ, բայց հռոմէականաց կողմանէ անդամ մը դանուելով՝ ամենայն զօրութեամբ պաշտպանութիւն ըրեր է քահանայից, իբրև թէ անոնք իրենց կրօնքը փոխած ու հռոմէական եղած ըլլան։ Եւ յաջողեր է։

Այս առաջին հեռագրին վրայ, Պատրիարքարանէն անմիջապէս թագրիր եղաւ Բ. Դրան, և միանգամայն պէտք եղած պատասխանը հեռագրեցաւ գերապատիւ Առաջնորդին։

Բայց, Բ. Դրնէն դեռ պատասխան չեկած, Առաջնորդին կողմանէ երկրորդ հեռագրին եկաւ, ուսկից կհասկցուի թէ՝ տեղական կառավարութեան թոյլտուութեամբ հռոմէականք յաջողեր են դրաւել յիշեալ քահանաները։

Պատրիարքարանը դարձեալ պէտք եղածը ծանոյց Բ. Դրան, առանց ժամանակ կորուսանելու։ Հետևաբար՝ կյուսամք թէ՝ անյապաղ պարտաւորաշաճ անօրինութիւն մը կրլլայ կայսերական բարեխնամ կառավարութեան կողմանէ։

Հեռագիրք, ինչպէս յայտնի է, մանրամասն չեն նշանակեր խռովութեան պատճառն, բայց կմակաբերեմք թէ՝ քահանայք Նիկողոս եպիսկոպոսէն ձեռնադրուած ըլլալնուն համար ժողովրդենէն չեն ընդունուեր։ և երբ եկեղեցւոյ մէջ տեսնուեր են՝ ժողովուրդը խռովեր ու երկպառակեր է։ Իսկ քահանայք գուշակելով թէ պիտի պատժուին եթէ դերապատիւ Առաջնորդին յանձնուին, դացեր հռոմէականաց դիրքը նետուեր են։

Ի՛նչ և իցէ. հարկաւ այսօր կամ վաղը մանրամասն տեղեկութիւններ կհասնին այս նշանաւոր անցքին վրայ։

Սակայն, այս ամենուն սկզբնապատճառը Նիկողոս եպիսկոպոսն է, որ տակաւին չզդաստանալով, և իրեն համար եղած որոշումներն ու իրեն դէմ բոլոր Ազգին ունեցած ատելութիւնն ու զայրոյթը առ ոչինչ դրելով, և ազգային ամէն օրէնք ու իրաւունք լրբաբար կոխոտելով, ինքզինքը տակաւին Կիլիկիոյ կաթողիկոս կկոչէ, և եպիսկոպոս՝ վարդապետ ու քահանայ ձեռնադրելով, իր յանցանքը բազմապատկելէն զատ՝ ժողովրդեան յուզման ու խռովութեան և Պատրիարքարանի նորանոր զբաղմանց տեղի կուտայ։

Նիկողոս քիչ օրէն պիտի պատուհասի. բայց ափսո՛ս որ իր վնասները շատ եղան . . . ։

ԵՐԶՆԿԱՅԻՈՅ ՀԱՆՐԱԳԻՐՆ

Երզնկայի ազգայնոց կողմանէ բազմաթիւ պատուաւոր անձանց ստորագրութեամբ հեռաւեալ հանրագիրն տրրուեր է այս շաբթու ամենապատիւ սրբազան Պատրիարք Հօր և Քաղաքական ժողովոյ յորում՝ակներև կտեսնուի Ալէպթեան վարդապետին ընթացքը։

«Երզնկայի խեղճ ժողովուրդը երեք տարի աշխատեցաւ, հազիւ կրցաւ ազատիլ Բաղուանեանի ձեռացը. իրեն համար ուսումնասէր և ազգասէր Առաջնորդ մը կնդրէր՝ դիմեց ազգային վարչութեան, բայց դժբաղդաբար առաջնորդ մը ընդունեց, որ ամեն բոպէ և ամեն վայրկեան իր նախորդը փնտռել կուտայ փոխան նորա հետքը կրմնցուցնելու։ Նախորդը թէպէտ շատ պակասութիւններ ունեցաւ, բայց խորամանկ չըլլալուն՝ իր յանցանքները ծածկելու կարողութիւնը չէր հաններ։ Ահաւասի՛կ, Երզնկա Առաջնորդ մը ընդունած է, որ տեղւոյն մէկ քանիներն հաւաքելով ի՛նչ որ ուզէ կխաղայ, և անոնց ձեռօք ըրածներն ալ ծածկել կուզէ։

«Արդարև Երզնկայիք սխալեցան. Գրիգոր վարդապետը ուսումնական ու քաղաքակիրթ կարծելով՝ իւրեանց առաջնորդ ուզեցին. բայց Վարչութիւնը քանի որ իր աչքին առաջքը անոր ամեն ըրած խարդախութիւնները և անիրաւութիւնները տեսած էր, Պալատի և Եէնիգափուի մէջ, հայն, հայն, որ կրօնական ժողովոյ մէջ որոշեալ վճռոյն արձանագրութիւնները Պատրիարքարանի դիւանատունը կեցած են. զայս ամենայն տեսնելով՝ ի՛նչպէս որոշում տուաւ իր Բարէբդի վիճակին առաջնորդութեան վրայ աւելցնել նաև Երզնկայի առաջնորդութիւնը։ Երբ յիշեալ վարդապետը ազգային կեդրոնատեղին գործեց նոյն չարութիւնները, քանի՛ցս աւելի չկրնար գործել Երզնկայի պէս տեղ մը. այո՛, հարիւրապատիկ են գործածները։ Ահաւասիկ, 234 ստորագրութեամբ Մահսէր մը ղրկած է հոս, որուն ստորագրելոց չատերը ահսցնելով, գիւղացւոց ժամերը գոցելով՝ եթէ մահսէրը չստորագրեն, չբացուիր. քահանայից ահսցնելով որ եթէ մահսէրը չստորագրեն, իրենց եղբայրը Տ. Մանուէլը ինչպէս աքսոր ղրկեց, բոլորը նոյն դասը կդասուին. միւս ստորագրութեանց չատերը Թանխմղի տունը չուանի վրայ շարուած բաղում կնիքները կգործածուին, որ իւր բնակարանն ալ նոյն տունն է։

«Բարեխնամ տեսո՛ք, Տ. Մանուէլ քահանայի համար հոս գրելով աքսորանաց հրաման կառնու. երբ վարչութիւնը այս վարդապետին վարուցը նախածանօթ էր, ի՛նչպէս կրցաւ հաւատալ անոր գրութեանը և իսկոյն աքսորանաց վճիռը տալու հեռագիր ղրկեց առանց քննութեան առնելու։ Կրողութեամբ անոր դէմ՝ որուն գործածը անիրաւաբար է, և Տ. Մանուէլի աքսոր ղրկելը գիւղաւորապէս իւր շահուն համար քահանայից վախցնել և իր կամքը յառաջացընել. եթէ տեղւոյն երզնկայիք վախցուց՝ մահսէր ընդունեց, մենք երզնկայիքս՝ որ Պոլիս եմք, չեմք վախնար. Տ. Մանուէլն անմեղութեամբը աւազակներու հետ բանտարկելէն յետոյ Ս. Զատկի հրաշալի օրեր այլազգեայ ձեռօք և սեմերլի պէկիրով քաղաքէն դուրս հանելը, նորա անմեղութեան դէմ և Երզնկայի ժողովրդոյ պատուոյն դէմ ըլլալուն կրողը քեմք յաւիտեան. և յիշեալ քահանայի յետս կոչուելէն զկնի՝ իր անիրաւ և անխիղճ ընթացքին պատիժը որոշել կխնդրեմք։

«Տեսո՛ք, մինչև յարդ Երզնկա ո՛չ բողոքականութիւն և ո՛չ պապականութիւն մնած էր. քանի որ Գրիգոր վարդապետը Երզնկա մուտ ունեցաւ, բողոքականներու ձայներ եղան. և եթէ այս ընթացքով շարունակէ իր պաշտօնը՝ հետզհետէ չատնալու վրայ ըլլալուն, խիստ աղէկ է մէկ քաղաքի մը կուսութիւնն տրելու տեղ կղեր մը պակաս ըլլայ։ Եթէ նա իր արբանեակներու զօրութեամբ սուտ փուտով 230 ստորագրութեամբ մահսէր ներկայացուցած է, մեք նորա դէմ բողոքող 400 հոգի անձամբ Ձեր բարձր ատեանին ներկայանալու պատրաստ եմք։

«Ուստի, կխնդրեմք, մեր բողոքը լսելով՝ բարեհաճիք չխնայել գործադրութեան շնորհն»։

(Սարգիս-Ֆէֆոն)

Այս վիճակին առաջնորդական խնդրոյն վրայ ալ՝ որ վերջին օրերս ծանրացած է, խօսելիք ունիմք, բայց առաջիկայ առթի կթողումք։ Այսօր, միայն Ալէպթեան Գրիգորիս վարդապետին բարեկամաբար խորհուրդ կուտամք որ իր ներկայ անհաճոյ ու խռովայոյզ ընթացքէն ետ կենայ, և քահանայից ու ժողովրդեան հետ այնպէս վարուի, ինչպէս արժան և պարտ է առաջնորդի մը, հոգևոր Հօր մը և Հովուի մը։ Աստուծոյ տաճարին սրբատաչ բեմին վրայ ելնելու արտօնութիւն առած է, չէ՛ թէ այս կամ այն քահանայինը վրայ հայհոյանք ու նախատինք թափելու, այլ՝ քաղցրութեամբ օգտակարն ու բարին ժողովրդեան ուսուցանելու համար։

ՊՐՈՒՍԱՅԻ ԽՆԴԻՐԸ՝

Յատկապէս ուշադրութիւն կիրաւիրեմք հետևեալ նամակին վրայ։

• • • Խմբագիր

Խարդիւղ 21 Ապրիլ 1871

Պրուսայու վիճակը՝ որոյ քահանայական դասուն մէջ կգտնուինք, չարաչար յուզեալ է վերջին օրերս՝ դերապատիւ Առաջնորդ Հօր խնդրոյն և երկար բացակայութեան պատճառաւ։ Այս՝ յուզմունքն մեծ ցաւ կը պատճառէ մանաւանդ մեզ՝ իբրև եկեղեցականի, իբրև խաղաղութեան պաշտօնէի։ Այս ցաւն էր՝ զոր, ի սկզբան խնդրոյն՝ մեզի հետ զգալով մեր պատուարժան պաշտօնակիցք ալ՝ այն է, Պրուսայու քահանայական դասը, միաբանութեամբ խնդրագիր ուղղեցինք ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր և բարեխնամ վարչութեան՝ դերապատիւ առաջնորդին և սիրելի ազգայնոց ոմանց մէջ տեղի ունեցած անհամաձայնութեան վախճան տալու և հաշտութիւն ընելով խաղաղութիւնը վերահաստատելու համար։ Այս խնդիրն քանիցս անձամբ ալ մատուցինք ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր քանի մ'օր Պոլիս դընուելնուս պատեհ առթիւ, և ահա՝ կմեկնիմք՝ վստահելով որ մեր և բոլոր Պրուսացնակ ազգայնոց խնդիրը պատրիարքական պատկառելի վարչութեան կողմանէ ուշադրութեան առնուելով, ժամ յառաջ խաղաղութիւնը դառնայ Պրուսայու սիրելի ազգայնոց մէջ, որ օր յօրէ աւելի կսաստկին և չարագոյն վախճաններ թերևս յառաջ գան, եթէ Պատրիարքարանի արդար տնօրինութիւնք յապաղին։

Առաջնորդական այս խնդրոյն մէջ Պատրիարքարանը չա՞տ խստութեամբ կվարուի, կըսեն, և Պրուսայու վիճակայինք այսպէս հաւատացած կերևին՝ որ այս ատելիան յուզեալ և գայթակղեալ են. բայց՝ մենք չեմք հաւատար, և կարծեմք թէ՝ մեր դերապատիւ առաջնորդն այսպէս չարաչար հրապարակագոյժ ընելու չափ թերութեանց մէջ գտնուած չէ, բայց՝ քանի մ'ազգայինք միայն անհաշտ կերևին Նորին դերապատուութեան դէմ, թերևս իրենց հետ ալ իրև այլոց հետ անխիստ հաւասարութեամբ վարուած ըլլալուն համար։

Կաղաչեմ • • • Խմբագիր, որ այն երկտողս Ձեր ազգօգուտ լրագրոյն մէկ կողմը հիւրընկալել բարեհաճիք։

Անձնուէր սիրելի ազգիս
Սահակ քահանայ Իսթիւճեան

Ինչպէս յայտնի կերևի՝ նամակագիրն Պրուսայու քահանայի դասէն է, և Պրուսայու առաջնորդական ծանուցեալ խնդիրը կակնարկէ։ Կճանչնամք զինքը և ոգին, մեզ քաղաքակից և ծանօթ ըլլալուն պատճառաւ. չնորհակալ եմք իւր խաղաղասիրական ոգւոյն և անդրդուելի հաստատութեան համար ի սկզբանէ խնդրոյն մինչև յայժմ։ Եկեղեցականի մը պարտ ու պատշաճ եղող քրիստոնէական այս ոգին եթէ Պրուսայի քահանայական դասը միահամուռ մինչև վերջը կրեր, խնդիրն այս ատելիան չէր ծանրանար։ Պատասխանատու են Պրուսայու այն վեց քահանայք, որ՝ հակառակ իրենց նախորդ սարսափելի ստորադրութեան և խնդրոյն՝ ուրիշ դրեր Պատրիարքարան և լրագրութեան ղրկելով խնդիրն այլայլեցին, զանազան տարաձայնութեանց տեղի տուին, և Պրուսայու վիճակայնոց այսպէս չարաչար յուզման ու խռովութեան պատճառ եղան։ Ի՛նչ անուն տալ է այսպիսի եկեղեցականաց, և ո՛րչափ յարդ ու մեծարանք ընծայելու է։

Այո՛, պարտաւոր եմք չնորհակալութիւն մատուցանել արժանապատիւ Ս. Սահակ հօր, որ՝ իւր խաղաղասիրական յայտարարութեան վրայ հաստատուն կենալէն զատ՝ այս անգամ յիշեալ գիրն ալ հրատարակութեան տուած է և բուն խնդրոյն վրայ ակնարկութիւններ կընէ, զորս համաձայն կգտնեմք մեր և ուրիշ շատերուն համոզմանը։

Արդարև Պրուսայու Առաջնորդական ներկայ խնդրոյն բուն պատճառն ուրիշ բան չէ, այլ՝ դերապատիւ Տ. Բարթուղիմէոս Ս. Արքեպիսկոպոսին «Եավրիեանի և անոր ուրիշ ընկերակցաց հետն ալ իբրև այլոց հետ անխտիր հաւասարութեամբ վարուիլն»։ Զե՞մք լսեր թէ՝ երբեմն առաջնորդական խնդրոյ բուն պատճառն այս է։ Գաւառաց մէջ Մեծամեծք ըսուած ազգայինք երբ կտեսնեն որ Առաջնորդ մը ժողովրդասիրութեամբ ամենուն հետ հաւասարապէս կվարուի, և ազգային գործերը ազգային սահմանադրութեան համեմատ կը անօրինէ,— կզայրանան, կխռովին և կը խռովին և այսպէս երբեմն այլևայլ ամբաստանութիւններ կկուտեն Առաջնորդին դէմ, որպէս զի անպատուի՝ անուանարկի, ազդեցութիւնը ջնջուի, և իրենք գարձեալ ժողովրդեան միահեծան տէրն՝ իշխանը և աստուածն ըլլան։

Ճիշդ այս պատճառն ունին դերապատիւ Տ. Բարթողիմէոս Ս. Արքեպիսկոպոսի դէմ ոմանց յարուցած ամբաստանութիւններն ալ, ինչպէս կվկայէ Տ. Սահակ Հայրն, ինչպէս կվկայեն բոլոր քահանայական դասն միահամուռ ի սկզբան, և ոմանք միայն առյապայս շարամտութեամբ կհերքեն։

Ահա՛ դերապատիւ Տ. Բարթողիմէոսի յանցանքն այս է.— ժողովրդասիրութի՛ւն և հաւասարութեան սկզբանց պատկա՛ռ կալ։ Պրուսայու պատուարժան վիճակայինք ճանչցած ըլլալով Նորին դերապատուութեան այս բարի՝ օգտակար ու գեղեցիկ յանցանքն ու մեղութիւնը, և սկսած ըլլալով վայելել անոր արդիւնքը, այժմ այսպէս սատակ.յու ընեալ կրողքեն և ամենայն զօրութեամբ կպահանջեն չբաժնուիլ անկէց։ Որովհետև կտեսնեն թէ՝ ֆանքեր կըլլան զիրենք անոր հովութենէն զրկելու։

Հետևաբար՝ կցաւիմք որ Պատրիարքարանը, փոխանակ ժողովրդեան բողոքներուն ու արդար պահանջմանց ուշ և կարևորութիւն տալու, տարբեր տնօրինութիւններ կընէ այս խնդրոյն մէջ և մեր ազգայինքն ի զուր կխռովէ, և իբրև անհնազանդ ու ստահակ համարելով կառավարութեան կմատնէ։ Երբ անոնք բուռն զօրութեամբ բողոք կբառնան իրենց եղածխոտութեանց համար և իրենց սիրելի Առաջնորդն ու օրինաւորութիւնը կպահանջեն։

Զարմանալի է որ, մեր Պատրիարքարանը այս խնդրոյն մէջ այսպիսի ձախող ու խիստ ընթացք մը կբռնէ, մինչդեռ՝ ուրիշ շատ խնդրոյ մէջ «իմ կառավարութիւնս հայրական ու խաղաղարարական է» կըսէ։ Պրուսայի դերապատիւ Առաջնորդին վերադարձը կուզուի մեծագոյն մատամբ, հաղարաւոր ստորագրութեամբ հանրագրեր ու խնդրագրեր Պատրիարքարանի ու լրագրութեան վրայ կտեղան, և թագական մեծապատիւ խորհուրդը եղելութիւնը քանիցս կծանուցանէ.—ասոնց պէտք չէ՞ արժէք տալ. Պրուսայու ժողովուրդն ու պաշտօնական մարմինը ոչինչ են։

Օրէնք ունիմք հիմա. հասարակաց ձայնը պաշտելի է. Առաջնորդը ամբաստանողը մէկ քանի մանաւոր անձինք են. արդարութի՞ւն է այսպիսի մանաւորութեանց պատճառաւ հասարակաց Առաջնորդ մը անպատուել այս աստիճան, թող չտալ որ դառնայ իւր ժողովրդեան քով, և վէճի ու կռուի տեղի տալ և մինչև իսկ օտար դռներ մատնել մեր ազգայինքն ազգային խնդրոյ մը համար...։

Այո՞ է հայրական կառավարութիւնը. այո՞ է օրինաւորութիւնը. նո՞ր բան է այս։

Զարմանալի է որ Պատրիարքարանը ժողովրդեան այս վիճակին առջև իւր խստութիւններն առաւել յառաջ կտանի։ Կարծես թէ, դերապատիւ Տ. Բարթողիմէոսի հետքն իսկ չձգելու համար և ժողովուրդը առաւել զայրացնելու դիտմամբ, անոր փոխանորդն ալ կառավարութեան ձեռօք մայրաքաղաքս բերելու կելնէ, մինչդեռ նա Պատրիարքանի դէմ անհնազանդութեան գործի մը մէջ գտնուած չէ, և ինքնայօժար գալու պարտա՛ստ։ Լսածնուս նայելով՝ այսօր Պրուսայէն ճամբայ պիտի ելնէ եղեր փոխանորդը մայրաքաղաքս գալու համար. բայց կառավարութիւնը ստիպուած է եղեր, ոստիկաններով պարփակել զանի՝ ժողովրդեան ձեռքէն ազատելու համար։ Եթէ Պրուսա այսօր դարձեալ անտեղութիւն մը պատահի, պատասխանատո՛ւն Պատրիարքարանն է։

Դարձեալ՝ զարմանալի է որ, Պրուսայու վիճակայինք ամեն զիջումներ կընեն, բայց Պատրիարքարանի «հայրական ու խաղաղարարական» ըսուած կառավարութիւնը այս խնդրոյն մէջ ո՛չ զիջումներ կընդունի և ո՛չ օրինաւորութեան ձայնի միտ կդնէ։ Պրուսացիք կըսեն.— մանաւոր բաղաքացիներ կան Առաջնորդ Հօր դէմ. շատ աղէկ, թո՛ղ դատուին, բայց՝ ըստ օրինի՝ Պրուսայի երեսփոխանական ժողովոյ առջև.— Պատրիարք սրանը ո՛չ այս կընէ և ո՛չ այն, այլ՝ խստութիւնը իրեն առաջնորդ առած կերթայ՝ ինքզինքը չդիտնալով թէ ո՛ւր կերթայ. մեր ազգայինները կառավարութեան կմատնէ. և այս մատնութեան համար Բ. Դրնէն հանել տուած գիրն ալ Եավրիեանի յանձնուելով՝ անոր սպասաւորին ձեռօք Պրուսա կերթայ արտաքնօք...։

Ա՛լ չեմք խօսիր. բաւական է. այսչափով ալ կրնայ հասկցուիլ մեր միտքը, եթէ հասկնալ ուզող կայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եանեայի կուսակալ անուանեցաւ Իզզէտտին Շիր փաշա։

—Եգիպտոսի բարձրագոյն խորհուրդն վերայ վերամբարձեալ Մանսուր փաշան իւր ընտանեօք հանդերձ Պրուսա հասեր է երեքշաբթի օրը Ջերմուկներուն համար, և ամսոյ մը չափ կենալէն յետոյ՝ մայրաքաղաքս ալ պիտի դայ։ Նորին բարձրութիւնը բերող Մբոբը անուն շոգենաւը մայրաքաղաքս եկած է ածուխ առնելու համար։ Այնչափ արագընթաց է, որ 60 ժամէն Մուսանիա եկեր է Աղեկսանդրիայէն։

—Հեռաւեալ սքանչելի դէպքը կը պատմի։

«Ոսքէն վիրաւորուած բրուսիայի զինուոր մը Պերլինի զինուորական հիւանդանոցը կտարուի դարմանի համար։ Ըստ որոշման բժշկաց՝ ոսքը կտրուած ժամանակ շատ արիւն դացած և տկարացած ըլլալով, բժիշկը կդառնայ անոր քով դանուող քաջառողջ և արիւնոտ ընկերին կըսէ թէ—«նայէ՛, ընկերդ պիտի մեռնի արեան պակասութեան պատճառաւ։ քո արիւնդ շատ է՝ քիչ մը չե՞ս տար անոր»։ Մարդը, թէև չդիտեր թէ իրմէ ի՞նչպէս արիւն պիտի տայ ընկերին, բայց՝ զանի մահուանէ ազատելու համար, անմիջապէս կպատասխանէ թէ—«Այո՛, ինչո՞ւ չտամ, մենք անոր հետ պատերազմի դացինք։ ընկերս է։ առէ՛ք որչափ արիւն որ պէտք է»։ Հետեւաբար՝ բժիշկը անոր բազկէն մաս մ՚արիւն հիւանդին բաղուկը կներարժէ, և այսպէս կզօրացունէ զանի։

Արդարև հաղուագէպ է այս տեսակ ընկերասիրութիւն։ Այս ոգին ուսնեցող զինուորներ ա՛րչափ զօրութդամբ կկռուին թշնամւոյն դէմ՝ իրենց ընկերին մահուան վրէժն առնելու համար։

Կըսեն թէ՝ բրուսիայիք գաղղիացւոց չէին կրնար յաղթել, եթէ մատնութեան դէպքեր և ներքին երկպառակութիւնք չըլլային գաղղիացւոց կողմանէ։ սակայն անտեղի է այս։ ահաւասի՛կ՝ յայտնի կերևին բրուսիացւոց դիւցազնական յատկութիւնները։

—Զինաստանի կառավարութիւնը նկատելով որ պատկան ժէղվիթք երկրին այլևայլ կողմերը աղէկանց դպրոցներ հաստատելով՝ անոնց կրօնքը խախտելու նպատակ ունին, – բոլոր եւրոպական դեսպանաց շրջաբերական ուղղելով պահանջեր է որ յիշեալ դպրոցները գոցուին։

—Գերմանական կայսրութիւնը կշանայ իւր ծովային զօրութիւնն աւելցուցնել։ Երկու խիստ մեծ զրահաւորներ ապրպրերը է Անգղիոյ։ հինգ հատ ալ իւր նաւարաններուն մէջ շինուելու ընթացքի են վերջին օրերս։

—Փարիզէն նորեկ ճամբորդ մը խիստ տխուր կերպիւ կնկարագրէ մայրաքաղաքին վիճակը։

«Փողոցները ամայի են։ շատ քիչ անգամ կառք կտեսնուի։ խանութներուն՝ սրճարաններուն՝ դրօսարաններուն և ուրիշ այսպիսի տեղերուն մեծագոյն մասը գոց են։ միայն քանի մը հատ բաց են, բայց անառակ ու ցոփ արանց ու կանանց համար։ մեծ պանդոկներուն մէջ ամենևին մարդ չկայ, իսկ պղտիկներուն մէջ՝ շա՛տ քիչ։ դիշերը ու ցերեկ միայն թընդանօթի ձայն կլսուտայ։ ապստամբաց վիճակն օրըստ օրէ կվատթարանայ։ դաղթողներուն թիւն մինչև 600 հազար կը հաշուեն։

«Ապստամբաց վարչութիւնը եկեղեցական դոյքը յափշտակելէն զատ, եկեղեցականներն ալ այնչափ կհալածէ, որ ամենքն ալ ծակէ ծակ փախած պահուտած են և ո՛չ ոք կրնանալ մայրաքաղաքին մէջ նոյն կերպարանքով։ այս պատճառաւ մեռելաց իրենց աղդականաց ձեռօք կվերցուին կթաղուին առանց եկեղեցականի։ դարձեալ այս պատճառաւ եկեղեցիք բոլորովին անտէր ու անպաշտպան մնալով՝ ապստամբք՝ զանոնք աղէկ մը կողոպտելէն յետոյ՝ դրանց վրայ թղթերէ կվակցունեն «Այս խանութը վարձու կըսըրուի» նշանակելով։

—Յունաստանի կառավարութիւնը լսած ըլլալով որ Շերայի նաւահանգստին մօտերը մեծ շանաձուկ մը կդտնուի, զանի սատկեցուցնելու աշխատած ատենը, նաւատաղ մը հրացանով սատկեցուցեր է։ Հետևաբար՝ դին ցամաքը հանուեր և կշռուեր է։ 400 օքայ եկեր է։ Ամէնք տարուեր և կենդանական հնութեանց մէջ դրուեր է։

Գահակորոյս Նաբոլէոնի կողմանէ Գաղղիոյ ազգային ժողովին ուղղուած բողոքագրի մը հետևեալ պատասխանը տրուեր է, յիշեալ ժողովին նախագահին միջոցաւ,

«Պ. Պոնապարդ

«Ընդունեցայ ձեր այն գիրը՝ որ կը-
«բողոքէք Գաղղիոյ գահէն ձեր ազգա-
«տոհմին զրկուելու որոշման դէմ՝ զոր
«ազգային ժողովը ըրաւ մեծագոյն մա-
«սամբ։

«Ի պատասխանի ձեր բողոքագրոյն,
«ձեզ կզրկեմ՝ Գաղղիոյ ձեր ունեցած
«պարտուց համառօտ հաշիւն։

«1.— Ալդաս

«2.— Լօրէնի մէկ մասն ու Մէց

«3.— Հինգ միլիար ֆրանք՝ պատե-
«ղազմական ծախսուց վճարումն

«4.— Երեք միլիար ֆրանք՝ պատե-
«ղազմի համար Գաղղիոյ ըրած ծախքը

«5.— Երկու միլիար ֆրանք՝ պատե-
«ղազմին պատճառաւ վնասեալ գաղ-
«ղական գաւառաց, և՝ վերաբերելոյ
«ու ապանելոյ ընտանեաց յատկացեալ
«թոշակները։

«Այս հաշուոյն մէջ չէ, քանզի մեայ
«իշխանութեանդ ատեն դողցած ու
«վատնածներուդ հաշիւը՝ որոյ քննու-
«թիւնը առ այժմ ետ ձգուած է։

«Մեր հայրենեաց եղած այս ամեն
«վնասուց փոխարէնը եթէ հատուցա-
«նես, կարելի է այն ատեն ուշադրու-
«թեան առնուի բողոքագիրդ։ սակայն՝
«առ այժմ իրրև ոչինչ համարուած է»։

ԲԵՐԱԿԱՆ
ՀՆԱԶԵՒ ԳԻՐՈՎ, ԵՒ ՀԻՆ ՈՃՈՎ,
Ն՝ը դոպէրոՒԼ Աբովեան

Պատկերազարդ, դեղատիպ, ընտիր թղթոյ վրայ, 36 երեսէ բաղկացեալ։

Գին 100 հատի 25 ղրշ։ շատ գնողներու համար՝ բաւն գնոյն վրայ զեղչ կըլլայ՝ ըստ քանակութեան։

Գրավաճառ Պ. Գավաֆեան, 1000 հատ տետրակներ ու գրքեր վիճակահանութեան դրած է, 1000 բաժնի վրայ, և մէկ բաժինը 3 ղրուշ։ 250 տոմսակ ծախուելէն անմիջապէս վերջը վիճակահանութեան օրը մէկ երկու լրագրոյ մէջ պիտի ծանուցուի։ Իւրաքանչիւր բաժին մէկ գիրք կամ՝ տետրակ պիտի շահի։

Ցոմսակները կծախուին Գավաֆեան գրատունը և Մահմուտ-փաշա Պոյաճի Մանուկ աղայի խանութը թ. 208

ՍԶԴ

Փունջը հատով առնել ուզողները կը հրաւիրուին՝

Պօլիս Զաքմագճըլար եօղուշու Զիւմբ պիւլլի խանի տակ Պ. Գավաֆեանի գրատունը։

Պաղչէ-գափու, կամոր ըլլին դլուխը դաղինօն։

ԱՌՈՂՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Մանկութեան.— Պատանեկութեան.—Զարվահասութեան.— Ծերութեան.— Ժուժկալութեան

Խրատ ամենեցուն. ոգելից ըմպելեաց և ծխախոտի վնասները

Հրատարակեց

Ա. ՏՕԼՖ ՐԻՕՆԻ

Թարգմանեաց

ՆԱԶԱՐԷԹ Ս. ԶԱՆՊԱԳՃԵԱՆ

Գին 5 ղուրուշ

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.— Միայն չարաթ օրերը կհրատարակուի։

2.— Տարեկան բաժանորդագինն է միայն երկու արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՝ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՝ գաւառաց համար։

3.— Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

4.— Հատը 40 փարայ է, և կգտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

5.— Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար։ Աւելի ամսոյ կըլլայ աւելի անգամներու համար։

6.— Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն—Տէր Հ. Ս. Ալամդարեան, կամ Պօլիս Զաքմագճըլար – եօղուշու Զիւմբիւլլի խան վերի յարկ թիւ 24։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՄԴԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՊՕԼԻՍ ԶԻՒՄԲԻՒԼԼԻ ԽԱՆ ՎԵՐԻ ՅԱՐԿ
ԹԻՒ 24